Օրվա դասի պլան

Վայոց ձորի մարզի Սարավանի հիմնական դպրոցի դասվար՝

Մարիամ Հակոբյան

Դասարան -Առաջին

Առարկա - Մաթեմատիկա

Թեմա -Երկարության չափումը

Նպատակ - Առարկաները ճանաչելու, նկարագրելու, փոխդասավորվածությունը ՝ հեռու, մոտ , երկար, կարճ հասկացությունները համեմատելու կարողունակությունների զարգացում:Քանոնը որպես երկարության չափման միջոց, գործիք կիրառելու կարողունակության ձևավորում, սանտիմետրը որպես չափման միավոր կիրառելու, գործնականում նաև չափումներ կատարելու կարողունակությունների ձևավորում:Խմբային աշխատանք կատարելիս աշխատանքի քայլաշարին ճիշտ հետևելու, ընկերների հետ համագործակցելու, աշխատելու կարողունակությունների ձևավորում:Խնդիրների լուծման հմտությունների ձևավորում:

Վերջնարդյունքներ – Ճանաչի, համեմատի, տեսակավորի առարկաները ըստ հատկությունների՝ ձևի, գույնի, չափի,նյութի:Համեմատի առարկաները զույգեր կազմելու միջոցով՝երկար,կարճ:Կռահի և շարունակի պարզել օրինաչափություններ ըստ հատկանիշի՝ ուղիղ, հատված, կետ, գիծ, բաց և փակ բեկյալներ:Կարողանա չափումներ կատարել քանոնով, պատկերի սանտիմետրով չափման միավորներ, կատարի գործնական աշխատանք, համագործակցի ընկերների հետ,պահպանի գործնական աշխատանքի քայլերի

հերթականությունը:Վերլուծի և կազմի պարզագույն խնդիրներ չափման միավորների վերաբերյալ:

Օգտագործվող նյութեր – Պաստառներ , ժապավեններ, գունավոր թղթեր, քանոն, մկրատ, A4 թղթեր, սոսինձ:

Խաչվող հասկացություններ-Օրինաչափություն, մասշտաբ, քանակ ,ժամանակ և տարածություն:

Միջառարկայական կապ –Մայրենի, Տեխնոլոգիա, Ֆիզկուլտուրա,Կերպարվեստ:

Դասի ընթացքը.

Ուսուցիչ	Սովորողներ
. Ներածական մասում մտագրոհի միջոցով վերհիշեցին անցած թվանշանները, դրանց նախորդն ու հաջորդը ,պաստառների միջոցով առաջարկեց նշել պատկերները՝ մեծ փոքր, երկար կարճ: .Հիմնական մասում աշխատանք կատարվեց դասագրքով , կատարվեց չափումներ , համեմատում ,ներմուծվեց սանտիմետրի գաղափարը: .Քանոնով առաջարկվեց չափել իրենց դասագրքի, մատիտի, գրիչի երկարությունները, կատարվեց զույգեր կազմելու միջոցով համեմատություններ: .Ֆիզկուլտ դադարի ընթացքում քայլերով չափվեց դասարան ի երկարությունը, լայնությունը: .Ժապավենների երկարությունները չափելով առաջարկեց կատարել եզրահանգումներ առարկաների երկարությունների վերաբերյալ և աշխատանք կատարվեց տետրերի մեջ: .Գործնական աշխատանքը կազմակերպեց խմբային աշխատանքի	. Արագ ,միմյանց չխանգարելով վերհիշեցին թվանշանները, նրանց նախորդ և հաջորդ լինելու օրինաչափությունը: . Անվանեցին ցուցադրված պաստառի Երկրաչափական պատկերները, համեմատեցին,վերլուծեցի տարբեր հատկություններին համապատասպան: Աշխատանք կատարեցին դասագրքով, կատարեցին չափումներ ,հետո նաև իրենց քանոնով երժզրահանգումներ կատարեցին սանտիմետրի՝ որպես չափման միավոր լինելու վերաբերյալ: . Ֆիզկուլտ դադարի ընթացքում իրենց քայլերով չափեցին դասարանի երկարությունը, լայնությունը:Կատարեցին քանոնով չափումներ՝ չափելով իրենց դասագրքի, տետրի գրիչի երկարությունները: . Գործնական աշխատանքի ընթացքում օգնում էին միմյանց, կտրում գունավոր թղթեր և սոսնձում թղթի վրա ըստ երկարությունեերի՝ կարճից երկար կամ հակառակը:Ընկերներով

միջոցով՝ գունավոր թղթերով չափումներ նյութի ամրացում կատարվեց: .Ավարտական մասում կատարեց անդրադարձ, վարժեցում նոր նյութի վերաբերյալ:	համեմատեցին իրենց ժապավենների երկարությունները, կատարեցին եզրահանգումներ: . Կրկնեցին սանտիմետրի՝ որպես երկարության չափման միավոր լինելու գաղափարը: